Ժ. Ճ. Ժ. Կ.
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՒՌԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ՀՐԱՀԱՆԳ

## ՀԱՎԱՔՄԱՆ, ՄԻՋԱՆՑԻԿ ՅԵՎ ՄԱՐՇՐՈՒՏԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴԻՍՊԵՏՉԵՐ ԿՈՒՏԱԳԻՆԻ ՓՈՐՁԸ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

| | |
|---|---|
| Ե | Ներկա հրահանգը մտցվելու յե «Յերկաթուղային գործակալներին ձեռնարկներով մատակարարելու կանոններում» (էջ. 0/198) 412-ա ըստ կարգի համարի տակ։ |
| 93 ց | |

Ե Գ Շ Ջ ; Ե Ն Տ

656.2
Հ-99

[illegible]ԱՍՅԱՆ ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
1 9 3 5

Гос. Публичная библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна

17.06.2013

Խմբագիր՝ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
Թողարկիչ՝ Ց. ՄԻՐԿՈՎԻՉ
Հանձնված է տպագրության 27/VI
Ստորագրված է տպելու 10/VII 1935 թ.
Պատվեր № 1440,
Տիրաժ 500
Գլավլիտ № 1335

Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան կոմբինատի տպարան
«Զարյա Վոստոկայի» հրատարակչություն

Հաստատում եմ
Հաղորդակցության ճանապարհների
Ժողովրդական կոմիսար ԱՆԴՐԵՅԵՎ
10-ին ապրիլի 1934 թ.

# ՀՐԱՀԱՆԳ

## ՀԱՎԱՔՄԱՆ ՄԻՋԱՆՑԻԿ ՅԵՎ ՄԱՐՇՐՈՒՏԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴԻՍՊԵՏՉԵՐ ԿՈՒՍՏԱՖԻՆԻ ՓՈՐՁԸ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Գնացքների դանդաղ առաջ շարժվելը գծամասերում, կայարաններում նրանց հետացնելը, յերթևեկության գծագրի (գրաֆիկ) խախտելը և առևտրական (կոմերցիալ) արագությունների իջեցնելը հանդիսանում է ուղղակի հետևանք գնացքների հետ աշխատանքի վատ կազմակերպման, մանավանդ հավաքման գնացքների հետ: Ընկ. Կուստաֆինի փորձը գործադրելը նպատակ ունի վերացնել խոչընդոտները, վորոնք խանգարում են գնացքների նորմալ առաջընթացին, կազմակերպել նրանց ճիշտ պատրաստումն սկզբնական կայարաններում և աշխատանքը՝ միջանկյալ կայարաններում, պարզորոշ կերպով ղեկավարել և կարգավորել գնացքների յերթևեկությունը, իսկ գլխավորը՝ ապահովել այդ աշխատանքում գնացքային դիսպետչերների, կոնդուկտորների, գնացքային բրիգադների, մեքենավարների և կայարանային աշխատողների ակտիվ մասնակցությունը:

2. Գնացքային բրիգադների և գծի ուրիշ աշխատողների հրահանգման համար սահմանվում է նրանց պարբերական ուղեցումները դիսպետչերների և շահագործման բաժանմունքների ուրիշ ավագ աշխա-

24 SEP 2010

տողների կողմից: Նրանց հիմնական խնդիրն է՝ չփոխարինելով գլխավոր կոնդուկտորին և ԴՍՊ-ին, կենդանի օրինակներ ցույց տալով սովորեցնել, ինչպես պետք է աշխատել գնացքների հետ:

## 1. Հավաքման գնացքի պատրաստումը ձևավորման կայարանում

3. Յուրաքանչյուր հավաքման գնացք պետք է թողարկվի սկզբնական կայարաններից և ճանապարհի դիսպետչերի կողմից նախորոք կազմած գծագրով (գրաֆիկ):

Առաջին հերթին պետք է ապահովված լինի գնացքի ժամանակին և ճիշտ կազմելն ու պատրաստելը շահագործման բաժանմունքի կայարանային աշխատողների և դիսպետչերի կողմից:

Շահագործման բաժանմունքի գնացքային դիսպետչերը չվացուցակը և կարգադիր-հրամանը կազմելու համար, ոչ ուշ, քան յերեք ժամ գնացքն ուղարկելու ժամանակից առաջ, պետք է ստանա.

ա) միջանկյալ կայարաններից – բոլոր անհրաժեշտ տվյալները վագոնների կցման և նրանց համար հավաքման գնացքներում տեղեր թողնելու և մոտակա փոքր բեռների բեռնման մասին:

բ) Ձևավորման սկզբնական կայարանից – տվյալներ միջանկյալ կայարաններում վագոնների պոկման և փոքր բեռների բեռնաթափման մասին:

գ) Բացի դրանից գնացքային դիսպետչերը պետք է հաշվի առնի հավաքման գնացքի կանգառումների և ընթացքի ժամանակը, կազմի չվացուցակը և ուղարկման կայարաններին կարգադիր – հրաման տա գնացքի ձևավորման համար և տեղամասի կայարաններին մոտակա աշխատանքի մասին:

4. Գնացքի սկզբնական ուղարկման կայարանը պարտավոր է հավաքման գնացքի ձևավորելը վերջացնել ոչ ուշ, քան 1 ժամ 30 րոպե ուղարկելուց առաջ, հոգալ, որպեսզի վագոնները ժամանակին առևտրական և տեխնիկական զննման յենթարկվեն, ժամանակին նորոգվեն, փաստաթղթերը պատրաստվեն և գնացքային բրիգադն ու գնացքային շոգեքարշը ժամանակին կանչվեն:

Ձևավորված գնացքը պետք է համապատասխանե.

ա) Դիսպետչերի կարգադիր – հրամանի, բ) առևտրական և տեխնիկական շահագործման կանոնների, գ) տվյալ տեղամասի համար վագոնների, ըստ խմբակների ընտրելու սահմանված կարգի և դ) հավաքման գնացքների, կազմակերպման հրահանգի (բրոշյուրա Ե/308) բոլոր պահանջներին:

5. Գնացքի գլխավոր կոնդուկտորը պարտավոր է.

ա) մանրամասն ծանոթանալ գնացքային դիսպետչերի հրամանին հավաքման գնացքը ձևավորելու մասին և այդ գնացքի հետ մոտակա աշխատանքին միջանկյալ կայարաններում, տեղամասում գնացքի ընթացման դիսպետչերական չվացուցակին.

բ) գնացքային բրիգադի հետ միասին ընդունել գնացքը և փաստաթղթերը, մանրակրկիտ կերպով ստուգել ձևավորման ճշտությունը ըստ խմբակների, արգելակների, կցման, յուղողների կողմից գնացքի պատրաստման, ազդանշաններով բավարարման, կոնդուկտորների դասավորման և այլն.

գ) մինչև գնացքն ուղարկելը կանչել մոտակա միջանկյալ կայարանի ԴՍՊ-ին, վորտեղ աշխատանք է սպասվում, նախազգուշացնել նրան աշխատանքի մասին և ստանալ տվյալներ վագոնների պոկման, բեռնաթափման, կցման կարգի մասին (վո՞րտեղ են կանգնած վագոնները, ինչպես է ավելի ձեռնտու մանյովրներ կատարելը գլխից, թե պոչից).

դ) գնացքային մեքենավարին հանձնել չվացու-

24 SEP 20

ցակը և բացատրել նրան գնացքի հետ աշխատող աշխատանքի պլանը: Նույն կարգով ծանոթացնել կոնդուկտորական բրիգադի աշխատողներին:

6. Գնացքն ուղեկցող դիսպետչերը պետք է նախորոք ժամանե կայարան, ծանոթանա գնացքային դիսպետչերի հրամանին և մոտակա կայարանում ըսպասվող աշխատանքին, հետևել գնացքի ժամանակին և կանոնավոր ձևավորմանը, տալ անհրաժեշտ ցուցմունքներ շոգեքարշային և կոնդուկտորական բրիգադին, հսկելով, վորպեսզի գնացքի ձևավորման կայարանում պատրաստման ամբողջ պրոցեսում, ինքը գնացքային բրիգադը սկսած գլխավոր կոնդուկտորից մինչև յուղողը ակտիվ մասնակցություն ցույց տա և միանգամայն տեղյակ լինի գնացքի աշխատանքին, վագոնների խմբերի դասավորմանը և այլն:

## II Աշխատանքը հավաքման գնացքների հետ ճանապարհին՝ միջանկյալ կայարաններում

7. Այն մոմենտից սկսած, յերբ հավաքման գնացքը դուրս է գալիս կարգավորման կայարանից-շահագործման բաժանմունքի գնացքային դիսպետչերը անընդհատ կերպով հսկում է գնացքի յերթևեկմանը և նրա աշխատանքին միջանկյալ կայարաններում, տալով անհրաժեշտ ցուցմունքներ ԴՍՊ-ին, գնացքային բրիգադին և կապ է պահպանում գնացքն ուղեկցող դիսպետչերի հետ:

8. Գնացքային դիսպետչերի խնդիրն է արագ կերպով առաջ տանել գնացքը, կանոնավոր ուղղություն տալով ապահովել նրա ամենաձեռնտու ուղարկելը. գծամասերով անցնելը և մյուս գնացքների կողմից խաչհատվելը, կամ առաջկտրումը:

9. Միջանկյալ կայարանի ԴՍՊ-ն պարտավոր է.

ա) կազմել գնացքի աշխատանքի կարգադիր.

բ) մինչև հավաքման գնացքի մոտենալը պատրաստել կցման յենթակա վագոնները (պլոմբելը, փաստաթղթեր կազմելը, առաջուց ժամանած վագոնների բեռնաթափ անելը, բեռնողներին, հավաքման վագոններից բեռնելու և բեռնաթափ անելու համար:

գ) գնացքը կայարանին մոտենալիս, նրան հանդիպել պերրոնում և հանձնել պատրաստած կարգադիրը: գլխավոր կոնդուկտորին ցույց տալով վորտեղ են կանգնած վագոնները և ինչպես ավելի լավ կլինի նրանց մոտենալը:

10. Իր հերթին գլխավոր կոնդուկտորը պետք է կայարան ժամանելուց հետո պատրաստե զատման յենթակա վագոնների համար փաստաթղթերը, ժամանելուց անմիջապես հետո հանձնե նրանք ԴՍՊ-ին և ծանոթանա մանյովրներ կատարելու կարգին:

11. Գնացքի ժամանելուց հետո գնացքային բրիգադի յուրաքանչյուր աշխատող պետք է արագ կերպով և պարզորոշ կատարե իր աշխատանքը, այսինքըն՝

ա) գլխավոր կոնդուկտորը կատարում է կազմողի պարտականությունները, գործելով ԴՍՊ-ից ստացված կարգադրի համաձայն, տեղեկացնում է մոտակա մանյովրների կարգի մասին մեքենավարին և բրիգադին.

բ) կրտսեր կոնդուկտորները կատարում են վագոնների զատումներ և կցումներ, ստուգում են կազմին միացվող վագոնների պլոմբերը, դռնակները և վագոնային կողվածքի ամբողջությունը, պահպանում են գնացքային կազմը.

գ) մեկ յուղողը պետք է զննե կցվող վագոնները տեխնիկական տեսակետից, մյուսը — այդ ժամանակ պետք է ստուգի կազմը և վորտեղ է հարկավոր տակհարել և լցնել բուքսերը:

12. Յուրաքանչյուր միջանկյալ կայարանում գլխավոր կոնդուկտորը պետք է գնացքի հետ աշխատանքը վերջացնելուց հետո, հետախոսով կանչե հետևյալ միջանկյալ կայարանի ԴՍՊ-ին զատման չուր-

ջը խուսելու և պարզելու աշխատանքի պլանը հետևյալ կայարանում և այդ մասին տեղեկացնե բրիգադին, սելեկտորի միջոցով բաժանմունքի դիսպետչերից ստանա անհրաժեշտ ցուցմունքներ առաջ ընթանալու վերաբերյալ, պարզե հանգամանքը գնացքների հետ տեղամասում այն հաշվով, որպեսզի կարելի լինի օգտագործել բոլոր հնարավորությունները արագ կերպով առաջ ընթանալու:

13. Գնացքն ուղեկցող դիսպետչերը, պետք է հսկե մանյովրների ընթացքին և կոնդուկտորական բրիգադի աշխատողների ու յուղողների միջև աշխատանքի ճիշտ բաշխմանը, հրահանգել բրիգադին, կապ հաստատել գնացքային դիսպետչերի հետ և հարևան կայարանների հետ:

## III Հավաքման գնացքի ծայրի կայարանը ժամանելը

14. Հավաքման գնացքի ուղեմասի ծայրի կարգավորման կայարանը ժամանելուց հետո, բրիգադը փաստաթղթերը և գնացքը հանձնում է կայարանային աշխատողներին:

15. Ուղեկցող դիսպետչերը հետևողություններ է անում հավաքման գնացքի աշխատանքի հաջողության, հայտնաբերված բացերի, գնացքի ճիշտ ընթացման խախտման պատճառների և մեղավորների մասին. յերթևեկության հետևանքների մասին, աշխատանքի լավացման համար բոլոր առաջարկված միջոցների հետ միասին զեկուցում է շահագործման բաժանմունքի պետին:

## IV Կուտափինի մեթոդի գործադրելը միջանցիկ և մարշրուտային գնացքների առաջընթացման համար:

16. Դիսպետչերների կողմից հավաքման գնացքներին ուղեկցելու փորձը պետք է տեղափոխվի միջանցիկ և մարշրուտային գնացքներին նրա համար, որպեսզի ձեռք բերվի նրանց ընթացքը լավ գծագրի



(գրաֆիկ) սահմանված արագություններով և ամենաքիչ պարապուրդ տալով շոգեքարշների և բրիգադների փոխման համուղի կարգավորման կայարաններում:

17. Այստեղ հատուկ ուշադրություն պետք է դարձնել՝ հարկավորման և մարշրուտիզացիայի սահմանված սխեմաներով գնացքների ճիշտ ձևավորման վրա, այդ գնացքների մանրակրկիտ տեխնիկական պատրաստման և նրանց, խստորեն ըստ չվացուցակի, թողարկման վրա:

18. Գլխավոր կոնդուկտորը և դիսպետչերը պետք է հետևեն և միջոցներ ձեռք առնեն, որպեսզի մեքենավարները պահպանեն գծամասերում ընթանալու տրված ժամանակները, կրճատեն տեխնիկական կարիքներով կայարաններում կանգառումները:

19. Գլխավոր կոնդուկտորը և ուղեկցող դիսպետչերը պետք է հսկեն գնացքի բուքսերի ճիշտ սպասավորմանը յուղողների կողմից և տեխնիկական զննման կայարաններում ուշադիր վերաբերմունքին զննողների կողմից:

20. Յեթե գնացքը չի վերջացնում յերթևեկությունը տվյալ կարգավորման կայարանում, այն դեպքում ուղեկցող դիսպետչերը պարտավոր է հետևելու, որպեսզի բրիգադից գնացքն ընդունելը, վագոնների զատման և կցման համար անհրաժեշտ մանյովրները, և հետագա առաջընթացման համար գնացքը պատրաստելը կատարվեն գծագրով սահմանված պարապուրդի ժամկետներում և գնացքը առաջ գնա խստորեն ըստ չվացուցակի:

## V Շահագործման բաժանմունքի խնդիրները

21. Շահագործման բաժանմունքը պետք հավաքման գնացքների աշխատանքում հաջողությունն ապահովելու համար հավաքման գնացքների համար առանձնացնում է ամենափորձված կոնդուկտորների և

5 5 24.457

յուղողների հատուկ բրիգադներ: Հաջող աշխատանքի համար պարգևատրում է, ինչպես գնացքներին, նույնպես և կայարանային աշխատողներին և դիսպետչերներին:

22. Շահագործման բաժանմունքի պետը.

ա) մշակում է բոլոր ուղեմասերում ոժանդակ աղյուսակներ հավաքման գնացքների կանգ առման ժամանակի և գծամասային ժամանակների վորոշման համար գնացքի կշռից կախված:

բ) կազմակերպում է վագոնների հավաքման-բաշխման աշխատանքը այնպիսի ձևով, վորպեսզի փոքր բեռների բեռնումն և բեռնաթափումն կատարվի ժամանակի ամենանվազագույն ծախսամբ (առանց դատման բեռնաթափ անելը, բեռնողների արտելներ կազմակերպելը գնացքում, վագոններում փոքըր ուղարկումների ճիշտ տեղավորելը և այլն).

գ) մշակում է ըստ գծագրի (գրաֆիկ) դիսպետչերների և շահագործման բաժանմունքի ուրիշ աշխատողների սիստեմատիկ յերթևեկությունների կարգ գնացքների հետ:

Շահագործման Կենտրոնական Կառավարչության
պետ՝ ՊՈՍՏՆԻԿՈՎ

---

ՀՀ Ազգային գրադարան
NL0296063
ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ